ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-մայիս)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 112.5%, 2022թ. հունվար-մայիսին 2021թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 110,3 %, իսկ 2021թ. հունվար-մայիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104,4%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մայիսին կազմել է 952 մլրդ 573.6 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 8 մլրդ 474,7 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 111 մլրդ 872 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մայիսին կազմել է 131 մլրդ 48.1 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 19 մլրդ 3,2 մլն և 36 մլրդ 518.4 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-մայիսին կազմել է 1 տրիլիոն 837մլրդ 419.6 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 415 մլրդ 982 մլն և 650 մլրդ 312.3 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-մայիսին կազմել է 1 տրիլիոն 170 մլրդ 595,5 մլն դրամ, ինչը 2022 և 2021թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 263 մլրդ 981,3 մլն և 467 մլրդ 469,8 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 103.0%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.7%-ի և 102.3%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 116,7%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111,4 %-ի և 114.3-ի %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 124.5%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույ ն ժամանակաշրջանների 108.9%-ի և 107.4%-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսի 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 119.9%, 2022 և 2021 թվականների ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 124.9%-ի և 100.9%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-մայիսին կազմել է 189 մլրդ 614.2 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 58 մլրդ 972.3 մլն դրամով, 2021 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 47մլրդ 335.4 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մայիսին կազմել է 613 մլրդ 599. 7 մլն դրամ, ինչը 2022 թ և 2021 թ նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է՝ համապատասխանաբար 54 մլրդ 129 մլն և 135 մլրդ 580.9 մլն դրամով: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 2023թ. հունվար-մայիսին կազմել է 137 մլրդ 897.1 մլն դրամ, (ընթացիկ գներով), ինչը 2022թ. ցուցանիշից պակաս է 5 մլրդ 162.1 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 20 մլրդ 748.1 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մայիսին կազմել է 11մլրդ 462.6 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 531.4 մլն և 2 մլրդ 878.4 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 94.7%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 87.9%-ի և 108.4 %-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 107.2 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.6 %-ի և 98.6 %-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմաբ կազմել Է100,6 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.3 %-ի և 110 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 111.7 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.8%-ի և 104.5 %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մայիսին կազմել է 110 մլրդ 598,7 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 6 մլրդ, 74.4 մլն և 9 մլրդ 745.9 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մայիսին կազմել է 254 մլրդ 204.6 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021 թ,ի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համա պատասխանաբար 94 մլրդ 150,5 մլն և 128 մլրդ 750 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-մայիսին կազմել է 315 մլրդ 30.7 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանա կաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 53 մլրդ 289.9մլն և 121 մլրդ 407,2 լն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 105 5%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.2%-ի և 62.9%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 158,7 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 127.7 % և 113,7%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-մայիսին 2022թ. հունվար-մայիսի նկատմամբ կազմել է 104.7 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 128.5 %-ի և 103.2%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. մայիսին 2022թ. մայիսի նկատմամբ կազմել է 105.2%, 2022թ. մայիսին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.7%, 2021թ. մայիսին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.5%: ՍԳԻ-ն 2023թ. մայիսին 2022թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 99.1%, 2022թ. մայիսին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 106.0%, 2021թ. մայիսին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 104,7%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. մայիսի վերջի դրությամբ կազմել է 1 տրլ 123 մլրդ 594 մլն դրամ, ինչը 103 մլրդ 202 մլն դրամով կամ 10.1 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 115 մլրդ 526 մլն դրամով կամ 9,3 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. մայիսի վերջի դրությամբ կազմել է 64747 մարդ, ինչը 13845 մարդով կամ 17.6 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 25616 մարդով կամ 28.3%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. մայիսի դրությամբ կազմել է 45624 մարդ, ինչը 8894 մարդով կամ 16.3%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 16577 մարդով կամ 26.7 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվար-մայիսին կազմել է 7 մլրդ 337.8 մլն. դոլար, ինչը 3 մլրդ 411.2 մլն դոլարով կամ 86.9%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 4 մլրդ 473. 9 մլն. դոլարով 156.2 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը 2023թ. մայիսին կազմել է - 1 մլրդ 958.6 մլն դոլար, ինչը 814.6 մլն դոլարով կամ 71.2 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 267.8 մլն դոլարով կամ 183.5 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2023թ. մայիսին կազմել է 2 մլրդ.689.4 մլն դոլար, ինչը 1 մլրդ 298.1 մլն.դոլարով կամ 93.3 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 602.9 մլն դոլարով կամ 147.5 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. մայիսին կազմել է 4 մլրդ 648.2 մլն դոլար, ինչը 2 մլրդ 112.9 մլն. դոլարով կամ 83.9 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 870.9 մլն դոլարով կամ 161.5 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվար-մայիսին կազմել է 260080 դրամ, ինչը 44852 դրամով կամ 20.8%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 64628 դրամով կամ 33.1%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվար-մայիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 100 մլրդ 719.6 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 12,640.8 մլն դրամ, արտաքին աղբյուր ների հաշվին ֆինանսավորումը՝ -113,360.4 մլն դրամ: 2022թ. հունվար-մայիսին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 46 մլրդ 348.3 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 27,428.8 և -73,777.1 մլն դրամ: 2021թ. հունվար-մայիսին պետական բյուջեի պակասուրդը կազմել է -74 մլրդ 772.8 մլն դրամ, ընդ որում ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -219,986.3 և 294,759.1 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ